



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 09 » *Փետրվար* 2024թ.
ք. Արմավիր

N ՄՈ/ 87 -Ա

«ՈՍԿԵՀԱՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ
ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2024 թվականի փետրվարի 8-ի N ՄՈ/83-Ա և N ՄՈ/86-Ա որոշումները, «Ոսկեհատի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում փաստաթղթերի հանձնման-ընդունման աշխատանքները կազմակերպելու նպատակով.

որոշում եմ՝

- Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
- Հանձնաժողովին (Գ. Գևորգյան)՝ հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել «Ոսկեհատի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության հաշվապահ Ռոզա Կարապետյանին (համաձայնությամբ):
- Հանձնաժողովին (Գ. Գևորգյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել հինգ աշխատանքային օրվա ընթացքում և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:
- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչությանը (պետ Վ. Մկրտչյան)՝ սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչությանը (գլխավոր մասնագետ Ա. Համբարձումյան)՝ աշխատանքներն իրականացնելու համար ապահովել հերթապահ մեքենայի տրամադրումը:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:



ՄԱՐԶՈՒՆՏ

eID

Դ.ԽՈՒԴԱԹՅԱՆ

Հավելված

Հայաստանի Հանրապետության

Արմավիրի մարզպետի

2024 թվականի 09 փետրվարի

N ՄՈ/ -Ա որոշման

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

Հանձնաժողովի նախագահ՝

Գ. Գևորգյան -

Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետի աշխատակազմի
կրթության, մշակույթի և սպորտի վարչության
ավագ մասնագետ

Անդամներ՝

Շ. Խաչատրյան -

Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետի աշխատակազմի
կրթության, մշակույթի և սպորտի վարչության
գլխավոր մասնագետի պաշտոնակատար

Զ. Եղոյան -

Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետի աշխատակազմի
ֆինանսական վարչության գլխավոր մասնագետ

Հանձնող՝

Սոֆիկ Պետրոսյան -

«Ոսկեհատի միջնակարգ դպրոց» պետական
ոչ առևտրային կազմակերպության տնօրենի
նախկին պաշտոնակատար

Ընդունող՝

Քնարիկ Ավանեսյան -

«Ոսկեհատի միջնակարգ դպրոց» պետական
ոչ առևտրային կազմակերպության տնօրենի
պաշտոնակատար

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

09.02.2024



X. H. Hovhannisyan

VERIFIED QCSF 09.02.2024 12:18:51 GMT+4

Подписано: ХОУ HANNISYAN ARAM 3812640023